ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ 1947, № 1 *Общественные науки*

# ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

*1947 թվականի հունվարի 15-ից մինչև 18-ը տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր ժողովը՝ մասնակցությամբ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հիմնարկների ղեկավար ու գիտական աշխատակիցների, կենտրոնական կազմակերպությունների, մամուլի և սովետական ինտելիգենցիայի ներկայացուցիչների։*

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանի ներածական խոսքը.

*Ընկերներ։ Թույլ տվեք սկսել Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր ժողովի աշխատանքները։*

*Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ներկա նստաշրջանը գումարվել է այն պահին, երբ նա, մեր երիտասարդ Ակադեմիան, թևակոխել է իր աշխատանքների չորրորդ տարին։ Այսօր մեր Ակադեմիան ավարտելով իր կյանքի կազմակերպական շրջանը, հավաքվել է նշելու մի շարք գիտական հարցեր, որոնք մշակվել են նրա իսկական և թղթակից անդամների կողմից։*

*Ընկերներ։ Թեև որ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության կազմի լիազորությունների ժամկետն արդեն լրացել է, սակայն ներկա Ընդհանուր ժողովի նստաշրջանը պետք է ընտրի Ակադեմիայի Նախագահության նոր կազմ, որը, թեպետ Ակադեմիայի կազմակերպական շրջանն արդեն անցել է, բայց կանգնած կլինի ոչ ավելի թեթև խնդիրների առաջ, քան նախորդ կազմը։ Նախագահության այն կազմը, որ կընտրվի այսօր, պարտավորություն կստանձնի իրագործելու մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինի կողմից առաջադրված խնդիրները, այդ թվում նաև այն, որ ընկեր Ստալինն ասել է, թե մեր գիտնականները պետք է գերազանցեն մեր երկրի սահմաններից դուրս գիտության ունեցած նվաճումներից։*

*Ընկերներ. Թույլ տվեք Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր ժողովի նիստը հայտարարել բացված, նշելով, որ մեր նստաշրջանում մասնակցում են Ակադեմիայի իսկական և թղթակից անդամները։ Մի քանի ընկերներ, որոնք այս կամ այն պատճառով հնարավորություն չեն ունեցել մասնակցելու ներկա նստաշրջանին, այդ մասին հաղորդել են հեռագրերով և նամակներով։ Այդ ընկերների թվում են նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պրեզիդենտ, իսկական անդամ, ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ, ակադեմիկոս Լ. Ա. Օրբելին, որոնք աշխատանքով ծանրաբեռնված լինելով, չեն կարողացել ժամանել Երևան՝ մասնակցելու Ակադեմիայի ներկա նստաշրջանին։ Նույնպես մեծ ցավ են հայտնել Ակադեմիայի իսկական անդամ, ակադեմիկոս Ա. Ի. Ալիխանովը, Ակադեմիայի իսկական անդամ Կ. Ն. Պաֆֆենգոլցը և մի շարք թղթակից անդամներ, որոնք հնարավորություն չեն ունեցել մասնակցելու Ակադեմիայի Ընդհանուր ժողովի ներկա նստաշրջանի աշխատանքներին։*

* * *

*Հունվարի 18-ին Ընդհանուր ժողովը լսեց Ակադեմիայի իսկական անդամ Ա. Ի. Ալիխանյանի զեկուցումը հետևյալ թեմայով. «Արագածի վրա կոսմիկական ճառագայթների գծով կատարված հնգամյա հետազոտությունների արդյունքները»։*

Հունվարի 18-ին Ընդհանուր ժողովը լսեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանի զեկուցումը Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի 1946 թվականի գիտա-հետազոտական աշխատանքների հիմնական արդյունքների և 1947 թվականի հիմնական պրոբլեմների մասին։ Զեկուցողը հանգամանորեն կանգ առավ այն թեմաների վրա, որոնց ուսումնասիրությամբ 1946 թվականի ընթացքում զբաղվել է Ակադեմիայի գիտական աշխատողների կոլեկտիվը, նշելով ստացված արդյունքները ըստ գիտության առանձին բնագավառների, ինչպես նաև այն հիմնական պրոբլեմները, որոնց ուսումնասիրությամբ Ակադեմիայի գիտահետազոտական հիմնարկները զբաղվելու են 1947 թվականի ընթացքում։

Ընկ. Վ. Համբարձումյանն իր զեկուցումն ավարտում է հետևյալ խոսքերով. «Պետք է նկատել, որ ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների գծով մենք բավականին խոշոր հաջողություններ ենք ձեռք բերել անցած երեք տարիների ընթացքում։ Նույնը կարելի է ասել նաև բիոլոգիական գիտությունների նկատմամբ։ Սակայն, մեր թերությունները շատ ավելին են, քան հաջողությունները։ Մեր հաջողությունները սերտորեն կապված են Սովետական Կառավարության անմիջական օգնության հետ, մասնավորապես Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի քարտուղար ընկեր Գրիգոր Հարությունյանի ցույց տված անմիջական օգնության հետ։ Այժմ մեր ցանկությունը պիտի լինի 1947 թվականին ավելի մեծ պահանջներ ներկայացնել մեր գիտական աշխատողներին գիտության բնագավառում։ Եթե մենք մեր պահանջներն ուժեղացնենք նրանց նկատմամբ, այն ժամանակ մենք կհասնենք նորանոր արդյունքների և ի վիճակի կլինենք լուծելու այն խնդիրները, որոնք դրված են մեր առաջ մեր Պարտիայի և Կառավարության կողմից»։

Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանի զեկուցման շուրջը բացված մտքերի փոխանակությանը մասնակցեցին՝ Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ա. Ջ. Թամամշև, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Հ. Խ. Մաղաքյան, Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ռ. Հ. Տեռտերյան, Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ա. Ի. Ալիխանյան, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Լ. Մելիքսեթ-Բեկ, Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ս. Կ. Կարապետյան, Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գ. Ա. Ղափանցյան և ընկ. Վ. Վեմյան։

Ընդհանուր ժողովը լսելով Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանի զեկուցումը Ակադեմիայի 1946 թվականի գիտա-հետազոտական աշխատանքների հիմնական արդյունքների և 1947 թվականի հիմնական պրոբլեմների մասին, որոշեց՝ հավանություն տալ 1946 թվականի ընթացքում կատարված աշխատանքների արդյունքներին և հաստատել 1947 թվականի համար նշված հիմնական պրոբլեմները։

Հունվարի 18-ին, նախքան Ակադեմիայի Պրեզիդենտի ընտրությանն անցնելը, Ընդհանուր ժողովում կարդացվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պրեզիդենտ, ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու հետևյալ նամակը.

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամների և թղթակից անդամների Ընդհանուր Ժողովին։ Ողջունելով Ակադեմիայի Ընդհանուր ժողովը, որ գումարվել է նրա՝ Ակադեմիայի գործունեության եռամյակը բոլորելու կապակցությամբ, ես սրտանց ցավում եմ, որ հակառակ իմ ցանկությունների և մտադրության՝ մասնակցելու այդ սեսիայի աշխատանքներին, հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ այս անգամ ես հնարավորություն չունեմ գալու Երևան, գիտական զեկուցումով մասնակցելու սեսիայի աշխատանքներին և անձամբ հայտարարություն անելու իմ, որպես Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամի, աշխատանքների հետագա կազմակերպման առնչությամբ։

ՍՍՌ Միության Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի գոյության ժամանակաշրջանում զբաղվելով ֆիլիալի Նախագահության Նախագահի պաշտոնը, ես, իմ ուժերը ներածին չափ, ձգտել եմ այնպես կազմակերպել ֆիլիալի աշխատանքները և հասնել նրա այնպիսի մերձեցման Հայաստանի այլ գիտական հիմնարկների հետ, որպեսզի Ռեսպուբլիկայի գիտական ուժերի համախմբման հետևանքով հող պատրաստված լինի հարց դնելու Հայաստանում Ռեսպուբլիկական Գիտությունների Ակադեմիա հիմնելու հնարավորության մասին։

Ես անսահման երջանիկ եմ, որ Հայաստանի գիտական կազմակերպությունների համերաշխ ջանքերը, Ռեսպուբլիկայի Կառավարության և պարտիական ղեկավարության ամենօրյա հոգատարության ու բազմակողմանի աջակցության պայմաններում, այդպիսի

հող իրոք ստեղծեցին, և որ 1943 թվականին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան սկսեց իր գործունեությունը։

Ակադեմիայի կազմակերպման առաջին շրջանում, երբ ղեկավար օրգանների ձևավորման պրոցեսում, ես հնարավորություն ունեի և իմ պարտքն էի համարում, պատրաստակամություն հայտնելով ըստ ամենայնի աջակցելու երիտասարդ Ակադեմիայի ամրացման գործին, միևնույն ժամանակ կանխավ հայտնելու, որ հազիվ թե ես ի վիճակի կլինեմ հաջողությամբ իրագործելու Ակադեմիայի պրեզիդենտի պարտականությունները, քանի որ ես չեմ կարողանում Երևանում կենտրոնանալ կազմակերպական աշխատանքների վրա։ Սակայն, արժանանալով Ակադեմիայի պրեզիդենտ ընտրվելու պատվին, ես ձգտում էի, ուժերիս ներածին չափ, կազմակերպական պատասխանատու աշխատանք կատարել ընդհուպ մինչև այն ժամանակ, երբ իմ ղեկավարությամբ էվակուացված և բլոկադայի ժամանակ խիստ տուժած Պետական Էրմիտաժի վերականգնման անհետաձգելի աշխատանքներն ինձ ետ կանչեցին Լենինգրադ՝ ղեկավարելու Թանգարանի վերականգնման աշխատանքները։

Այս աշխատանքները, շենքերի վիճակի կապակցությամբ, շատ ավելի բարդ ու երկարատև եղան, քան ես կարծում էի, դրանք ավելի ևս բարդացան ծագած համապետական կարգի լրացուցիչ անհետաձգելի խնդիրներով. այդ հանգամանքը երկու տարի շարունակ ինձ համար բացառում էր Երևան գալու հնարավորությունը և իմ մասնակցությունը Ակադեմիայի կազմակերպական գործունեության մեջ սահմանափակվում էր լոկ նրա՝ Ակադեմիայի զարգացման հաջողությունները դիտելով, սակայն, չզրկելով ինձ հայ ժողովրդի կուլտուրայի պատմության բնագավառում իմ գիտական աշխատանքը շարունակելու հնարավորությունից։

Ակադեմիայի աշխատանքի առաջին եռամյակը, իսկ դրա հետ միասին նաև առաջին Նախագահության լիազորությունների ժամկետը լրացել է, և այդ, ըստ էության, համընկնում է կազմակերպման շրջանի ավարտմանը Ակադեմիայի կյանքում։ Ես խորապես համոզված եմ, որ հետագայում Ակադեմիայի աշխատանքների հաջողությունը, բացի գիտական խնդիրները կատարելու համար նրա բոլոր գիտական ուժերի լարումից, կախված կլինի Ակադեմիայի Նախագահության այնպիսի կազմակերպումից, երբ պրեզիդենտը և փոխ-պրեզիդենտը ամենօրյա մասնակցություն կունենան Ակադեմիայի և նրա համապատասխան ինստիտուտների կյանքին։ Միաժամանակ, հաշվի առնելով իմ տարիքը և ելնելով ջերմ ու անհողդողդ պահանջից՝ ավարտելու վաղուց ձեռնարկած մի շարք գիտական աշխատանքները, այդ թվում, և առաջին հերթին, իմ հիմնական գիտական մասնագիտության՝ հայագիտության գծով, և միևնույն ժամանակ իմ մեջ ուժ չզգալով հրաժարվելու գիտական և կազմակերպական աշխատանքից Էրմիտաժում, որին ես տվել եմ իմ, որպես գիտական աշխատողի, ամբողջ կյանքի երկու երրորդը և որտեղ ես երջանկություն եմ ունեցել կազմակերպելու հատուկ Արևելյագիտական Բաժին, որն իր խնդիրների մեջ է առնում, առաջին տեղերից մեկում, հայագիտության և, ամբողջությամբ առած՝ կովկասագիտության պրոբլեմները,— ես բնավ հնարավորություն չունեմ այլ հիմնարկում, առավել ևս Լենինգրադից հեռու, որևէ կազմակերպական աշխատանք կատարելու թեկուզ փոքր չափով։

Հաստատ հույս հայտնելով, որ հետագայում ես կարող եմ օգտակար լինել Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիային որպես նրա իսկական անդամը, որն իրագործում է իր հետազոտական աշխատանքը և մասնակցում է կոլեկտիվ գիտական աշխատանքին, ես խնդրում եմ Ընդհանուր ժողովին ընդունել իմ այս դիմումը որպես բացառություն և ներողամիտ լինել իմ նկատմամբ Ակադեմիայի Պրեզիդենտի պաշտոնում գտնվելու շրջանում իմ ոչ բավարար աշխատանքի համար, հետագայում որևէ կազմակերպական առաջադրանք չտալ ինձ, բացի իմ մասնագիտությունից բխող առանձին հանձնարարություններից։

Ընդհանուր ժողովին խնդրում եմ ընդունել իմ սրտից բխող ցանկությունները ինչպես տվյալ սեսիայի աշխատանքների հաջողության համար, այնպես էլ մեր Ակադեմիայի բարգավաճման՝ ի բարօրություն կուլտուրայի, ի երջանկություն մեր հայ ժողովրդի և ի փառս մեր բովանդակ Մեծ Հայրենիքի։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
իսկական անդամ, ակադեմիկոս ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻ

9/I 1947 թ.
Լենինգրադ

Ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու հրաժարականի կապակցությամբ ելույթ ունեցան՝ Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամներ Վ. Հ. Գուլքանյան, Գ. Ա. Ղափանցյան, Ս. Կ. Կարապետյան, Ավ. Ս. Իսահակյան։

Ընդհանուր ժողովը քննելով Հայկական ՍՍՌ ԳԱ Պրեզիդենտ, իսկական անդամ, ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու դիմումը Հայկական ՍՍՌ ԳԱ Պրեզիդենտի պաշտոնից իրեն ազատելու մասին, որոշեց.

1. Հարգել ակադեմիկոս Օրբելու դիմումը և ազատել նրան Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնից։

2. Շնորհակալություն հայտնել ակադեմիկոս Հ. Ա. Օրբելուն նրա բազմամյա և բեղմնավոր գործունեության համար՝ սկզբում ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի ֆիլիալի Նախագահության նախագահի և ապա Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնում։

3. Հաշվի առնելով ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու խոշոր ծառայությունները գիտության առաջ և մանավանդ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի կազմակերպման գործում, կախել նրա պորտրեն Ակադեմիայի շենքում։

4. Գոհունակությամբ արձանագրելով, որ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին ցանկություն և պատրաստակամություն է հայտնել շարունակելու մասնակցել Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի աշխատանքներին, հանձնարարել Ակադեմիայի Նախագահությանը և Պատմության ինստիտուտին՝ ստեղծել բոլոր պայմանները, որպեսզի ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին կատարի իր հայագիտական ուսումնասիրությունները Պատմության ինստիտուտում։

Նույն օրը, հունվարի 16-ին, Հայկական ՍՍՌ ԳԱ պրեզիդենտի պաշտոնի համար առաջադրվեց ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամ, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանի թեկնածությունը։ Վ. Հ. Համբարձումյանի թեկնածության կապակցությամբ ելույթ ունեցան՝ Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամներ Ա. Ա. Հակոբյանը, Ա. Ի. Ալիխանյանը, Մ. Գ. Թումանյանը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի Պրոպագանդայի բաժնի վարիչ Զ. Տ. Գրիգորյանը, Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ի. Վ. Եղիազարյանը, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Լ. Մ. Մելիքսեթ-Բեկը, Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ս. Կ. Կարապետյանը։

ՍՍՌՄ ԳԱ թղթակից անդամ, Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանը Ընդհանուր ժողովի կողմից, գաղտնի քվեարկությամբ, միաձայն ընտրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պրեզիդենտ։

Ընդհանուր ժողովի հունվարի 16-ի նիստում գաղտնի քվեարկությամբ ընտրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության հետևյալ կազմը՝

1. Գուլքանյան Վ. Հ.—Հայկական ՍՍՌ ԳԱ վիցե-պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ։
2. Եղիազարյան Ի. Վ.—Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ, ֆիզիկա-մաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար։
3. Բունիաթյան Հ. Խ.—Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ, Բիոլոգիական գիտությունների ակադեմիկոս-քարտուղար։
4. Թումանյան Մ. Գ.—Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ, Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար։
5. Ղափանցյան Գ. Ա.—Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ, Հասարակական գիտությունների Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար։
6. Կարապետյան Ս. Կ.—Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ։
7. Ալիխանյան Ա. Ի.—Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ։
8. Գևորգյան Գ. Բ.—Հայկական ՍՍՌ ԳԱ Նախագահության գիտական քարտուղար։

Ընդհանուր ժողովի հունվարի 17-ի ցերեկվա նիստում լսվեցին հետևյալ զեկուցումները.

ա) Վիտամին C-ի փոխանակության կապը կենսականորեն անհրաժեշտ այլ նյութերի փոխանակության հետ (Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Հ. Խ. Բունիաթյան).

բ) Նոր արդյունքներ մոտավորությունների տեսության մեջ (Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Ա. Լ. Շահինյան)։

Ընդհանուր ժողովի հունվարի 17-ի երեկոյան նիստում լսվեցին հետևյալ զեկուցումները.

ա) Նոր տվյալներ նյարդային պրոցեսի էնզիմո-քիմիական բնույթի վերաբերյալ և հետևությունները նրանցից (Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Խ. Ս. Կոշտոյանց).

բ) Զուխաջյանը և նրա տեղը հայ երաժշտության պատմության մեջ (արվեստագիտության դոկտոր Գ. Գ. Տիգրանով)։

Ընդհանուր ժողովի կողմից բուռն ոգևորությամբ և միաձայնությամբ է ընդունված ժողովուրդների մեծ առաջնորդ, հայ ժողովրդի լավագույն բարեկամ ընկեր Ստալինին ողջույնի հեռագիր ուղարկելու առաջարկությունը։ Ողջույնի հեռագրի տեքստը կարդում է Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գ. Ղափանցյանը։

Ընդհանուր ժողովը ողջույնի հեռագիր է ուղարկում նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Գ. Հարությունյանին։ Ողջույն-հեռագրի տեքստը կարդում է Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Լ. Մելիքսեթ-Բեկը։

Ընդհանուր ժողովը հունվարի 18-ին լսեց Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Գուլքանյանի զեկուցումը «[illegible]» թեմայով, որով և ավարտվեցին Ակադեմիայի Ընդհանուր ժողովի նստաշրջանի աշխատանքները։

Ակադեմիայի պրեզիդենտ ընկ. Վ. Հ. Համբարձումյանի եզրափակման խոսքը նստաշրջանի աշխատանքների մասին։

Ընկերներ։ Մեր Ակադեմիայի հունվարյան նստաշրջանի աշխատանքները վերջացան։ Մենք ամփոփեցինք վերջին երեք տարիների ընթացքում կատարած մեր աշխատանքները և ահա սկսել ենք կատարել նոր հնգամյակի երկրորդ տարվա աշխատանքները։ Ես ի սրտե հաջողություն եմ ցանկանում մեր Ակադեմիայի բոլոր գիտական աշխատակիցներին իրենց աշխատանքներում։

Ակադեմիայի Ընդհանուր ժողովի աշխատանքները սրանով հայտարարում եմ ավարտված։